«Գարուն 2026»
Ազգային և միջազգային վարկանիշի հաշվարկով մրցաշար
ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Ս/թ. մայիսի 5-ից 12-ը Հայաստանի շախմատի ակադեմիան «Շախմատի ակադեմիայի ակումբի» հետ համատեղ կազմակերպում են **ազգային և միջազգային վարկանիշի հաշվարկով մրցաշար:**

Մրցաշարում սահմանված են հետևյալ մրցանակները.

- 1-ին տեղ
- 2-րդ տեղ
- 3-րդ տեղ
- 4-րդ տեղ
- 5-րդ տեղ
- Լավագույն արդյունք ցույց տված շախմատիստուհի
- Մարզերից լավագույն արդյունք ցույց տված մասնակից
- Լավագույն արդյունք ցույց տված մինչև 14 տարեկան մասնակից
- Լավագույն արդյունք ցույց տված մինչև 10 տարեկան մասնակից
- Լավագույն արդյունք ցույց տված կարգային մասնակից

Հավասար միավորներ վաստակելու դեպքում մրցանակները չեն կիսվում, իսկ տեղերը կորոշվեն. հատված Բուհգոլցով, այնուհետև Բուհգոլցով և սև գույնով խաղացած պարտիաների քանակով: Յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի ստանալու միայն մեկ մրցանակ:

Մասնակցելու իրավունք ունեն շախմատի որակավորման առաջին կարգ /սահմանափակ քանակով/ և ազգային վարկանիշ ունեցող շախմատիստները: Մրցաշարի մասնակիցները պարտադիր պետք է ունենան **ՖԻԴԵ-ի նույնականացման համար /FIDE ID/,** իսկ չունենալու դեպքում նախապես դիմեն Հայաստանի շախմատի ֆեդերացիա /010(099) 44 01 05 /:

Ժամակարգ. 90 րոպե մինչև խաղի ավարտը՝ յուրաքանչյուր քայլի համար 30 վայրկյան հավելումով: Խաղասկզբի համար սահմանված ժամից **30 րոպեից** ավել ուշացած մասնակցին կգրանցվի պարտություն:

Մուտքավճար.

- 2000 և ավելի ազգային վարկանիշ ունեցող շախմատիստների համար - **5000 ՀՀ դրամ**
- մինչև 2000 ազգային վարկանիշ ունեցող շախմատիստների համար - **6000 ՀՀ դրամ**
- շախմատի որակավորման առաջին կարգ ունեցող շախմատիստների համար - **7000 ՀՀ դրամ /տեղերը սահմանափակ են – մոտ 15 շախմատիստ/:**

Ժամանակացույց՝

Ամսաթիվ	Խաղափուլ	Ժամ
5 մայիսի	1-ին տուր	15:30
6 մայիսի	2-րդ տուր	15:30
7 մայիսի	3-րդ տուր	15:30
8 մայիսի	4-րդ տուր	15:30
9 մայիսի	5-րդ տուր	16:00
10 մայիսի	6-րդ տուր	11:00
10 մայիսի	7-րդ տուր	15:30
11 մայիսի	8-րդ տուր	15:30
12 մայիսի	9-րդ տուր	15:30

Գրանցում.

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ - Հիշեցնում ենք, գրանցումը կատարվում է օնլայն տարբերակով Հայաստանի շախմատի ակադեմիայի կայքէջում https://www.chessacademy.am/ անհրաժեշտ է սեղմել **ԳՐԱՆՑՎԵԼ** կոճակը, լրացնել բոլոր դաշտերը և կատարել վճարումը:
Բանկային քարտի բացակայության դեպքում մասնակցության վճարները կարող եք փոխանցել **«Շախմատի ակադեմիայի ակումբ»**-ի հետևյալ հաշվեհամարին՝

Շահառու՝ «Շախմատի ակադեմիայի ակումբ» ՍՊԸ
Բանկ՝ Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/հ՝ 1570091773770100

Փոխանցում կատարելիս նպատակ դաշտում նշել մրցաշարը, մասնակցի անունը, ազգանունը և հայրանունը, ծննդյան տվյալները, կարգը, մարզիչը և կոնտակտային հեռախոսահամար:

<u>Ո Ւ Շ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն</u>

- **Գրանցման վերջնաժամկետ՝ մայիսի 1, ժամը 18:00**:

Մասնակիցների և մարզիչների բոլոր ծախսերը հոգում է գործուղող կազմակերպությունը:

Մանրամասների համար զանգահարել 010-44-84-73 հեռախոսահամարով: